ղեցին, նոյնպէս բարձր զանգակատամբ։ Աղիւ-սակերտ, ընդարձակ եկեղեցին նուիրեալ է 'ի պա-տիւ Վերափոխման Կուսին. ինչպէս արտաքուստ՝ նոյնպէս 'ի ներքուստ պայծառ և չէն է, մանաւանդ աւագ խորանը պատկերազարդ և ոսկեզօծ խաչկա-լովը. այս եկեղեցին ոչ միայն գիւղի մէջ, այլ որ և իցէ քաղաքի մէջ պարծանք կրնայ լինել իւր ժո-ղովրդեան։ Ցեսայ հոն հին ղրիմեցի խաչեր, ա-ւետարաններ՝ յայսմաւուրք. ունի երկսեռ վարժա-րան, ուր կ'ուսանին իբր 100 աշակերտք և աշա-կերտուհիք։ Գիւղիս աւագ երէցն, Տէր Յովհան-նէս Աֆտանդիլեան, Եգերացի է ազգաւ (հայա-յեալ), որ բազում մարդասիրութիւն ցըցուց առ մեզ. քանի մի ժամ մնացինք գիւղիս մէջ, եկե-ղեցւոյն երէցփոխանն Եղիազար աղայ՝ իւր տունը հրաւիրեց. և որովհետև ինձ հետաքրքրական էր տեսնել գեղացւոց բնակարանը, յօժարութեամբ ըն-դունեցայ հրաւէրքը։

Համբաւաւոր է Կախիվանու գիւղերուն մէջ պատրաստուած գոմէշի սերը, արդէն լսած էի գովեստ այդ սերի մասին, մայիսի գեղեցիկ օդը և կանաչ դաշտին մէջ երկժամեան ճանապարհոր-դութիւնը ֆայետեանով, գրգռիչ ազդեցութիւն մի արած էր՝ իմ արգոյ ուղեկցիս, նոյն և իմ ախոր-ժակաց վրայ, ուստի Պ. Եպիփան խոհական ձե-ւով իմացուց պառաւեալ երէցփոխանուհւոյն՝ որ գոմէշի սերով պատուել Ղրիմեցի հայր սուրբը՝ շատ վայելուչ կը լինի. ինձ հարկ եղաւ այդ մի-ջոցին՝ իբրև չլսող առաջարկութեան լռութիւն պաշ-տել։ Հազիւ մի կէս ժամ անցաւ, արդէն սեղա-նի նստած էինք, հասաւ խոր պնակով համբաւեալ սերը. աւելորդ է ասելը, որ բաց 'ի սերէն, ամե-